ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2019 թ. մարտի 18-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 3բ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Նելլի Քոչարյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ՝ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում՝

1. *Աշակերտների առաջադիմության հարցը:*
2. *Էքսկուրսիայի կազմակերպում:*
3. *Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:*

1.Լսեցին.- *Աշակերտների առաջադիմության հարցը:*

Ելույթ ունեցավ դասղեկ Նելլի Քոչարյանը՝ ներկայացնելով յուրաքանչյուր աշակերտի առաջադիմությունը: Մանրամասնորեն ներկայացվեց յուրաքանչյուր աշակերտի գրավոր և բանավոր խոսքը:

Ծնողներին անհատական ներկայացվեց իրենց երեխաների բացթողումներն ու թերացումները:

Որոշեցին.- Ավելի հետևողական լինել բարձր առաջադիմություն ապահովվելու համար: Այն ծնողները, որոնց երեխաները ունեն որոշակի թերացումներ, որոշեցին ավելի շատ համագործակցել ուսուցիչների հետ, տանը ավելի շատ աշխատել երեխաների հետ, որպեսզի վերացնեն բացթողումները: Կարդալ և գրել դժվարացող աշակերտների ծնողներն էլ խոստացան ավելի ուշադիր լինել իրենց երեխաներին, դժվարության դեպքում փորձել ուսուցիչների հետ միասին կարգավորել ցանկացած հարց կապված դասերի հետ:

2. Լսեցին.

Ելույթ ունեցավ դասղեկ Նելլի Քոչարյանը: Նա առաջարկեց երեխաներին էքսկուրսիա տանել Հ. Հ. Թումանյանի տուն- թանգարան և իր անունը կրող պետական տիկնիկային թատրոն, քանի որ այս տարի նշվում է Հ. Թումանյանի 150 ամյակը: Նա նաև նշեց, որ տուն –թանգարան այցելությունը կլինի դպրոցական աբոնեմենտային տոմսերով, որը տրամադրում է ՀՀ ԿԳ նախարարությունը:

Որոշեցին.- Հավանության տալ առաջարկին: Ծնողական խորհուրդը կատարեց ծախսերի հաշվարկ ,որի արդյունքում որոշեցին հավաքել 4000 դրամ գումար էքսկուրսիան կազմակերպելու համար:

3.Լսեցին.- *Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/*:

Դասղեկը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն պայուսակով, դասագրքերով և դպրոցական համազգեստով, ենթարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններին և աշակերտավայել վարք դրսևորեն, պահեն ծնող-դասղեկ-աշակերտ կապը: Քննարկվեց ընթացիկ հարցեր, որոնք վերաբերվում էին դասագրքերի պահպանմանը, աշակերտների հիգիենիկ վիճակին:

Որոշեցին.- Ցուցաբերել ավելի շատ ուշադրություն և հետևողականություն, որպեսզի աշակերտները ներկայանան աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին պատրաստ:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Վ. Մարտիրոսյան

Քարտուղար՝ Ա. Սարգսյան